



## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ԿՈԼԵԳԻԱ

---

### ՈՐՈՇՈՒՄ

5 հուլիսի 2016 թվականի

թիվ 80

քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության տեղեկատվական ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների ու տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին կից թիվ 3 հավելված) 30-րդ կետին համապատասխան եւ ղեկավարվելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 200 որոշմամբ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝

«Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության տեղեկատվական ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության կանոնները.

«Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության տեղեկատվական ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգը.

«Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության տեղեկատվական ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգը.

«Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության տեղեկատվական ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությունը.

«Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության տեղեկատվական ապահովում» ընդհանուր գործընթացին միանալու կարգը:

2. Սահմանել, որ՝

ա) սույն Որոշմամբ հաստատված նկարագրությամբ նախատեսված էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների տեխնիկական սխեմաների մշակումը եւ արտաքին ու փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղեկատվական փոխգործակցության իրագործման ժամանակ օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրում դրանց ընդգրկման ապահովումն իրականացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն դեպարտամենտի կողմից, որի իրավասության մեջ մտնում է Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման եւ զարգացման աշխատանքների համակարգումը:

բ) Սույն Որոշմամբ հաստատված կարգի 6-րդ եւ 7-րդ կետերին համապատասխան միանալու ընթացակարգի իրականացման ժամկետը կազմում է մեկ տարի՝ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝

S. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոլեգիայի  
2016 թվականի հուլիսի 5-ի  
թիվ 80 որոշմամբ

## ԿԱՆՈՆՆԵՐ

**«Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության տեղեկատվական ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության**

### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնները մշակվել են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող հետեւյալ ակտերին համապատասխան՝

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիր.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի «Ընդհանուր գործընթացներն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին» թիվ 200 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունվարի 27-ի «Արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական

համակարգում տվյալների էլեկտրոնային փոխանակման կանոնները հաստատելու մասին» թիվ 5 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 132 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 29 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդաբանության մասին» թիվ 63 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի սեպտեմբերի 28-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական իշխանության մարմինների՝ միմյանց միջեւ եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ անդրսահմանային փոխգործակցության ժամանակ էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման վերաբերյալ հիմնադրույթի հաստատման մասին» թիվ 125 որոշում:

## II. Կիրառության ոլորտը

2. Սույն կանոնները մշակվել են «Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության տեղեկատվական ապահովում» ընդհանուր գործընթացի (այսուհետ՝ ընդհանուր գործընթաց) մասնակիցների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կարգն ու պայմանները, այդ թվում՝ այդ ընդհանուր գործընթացի շրջանակներում կատարվող ընթացակարգերի նկարագրությունը սահմանելու նպատակով:

3. Սույն կանոնները կիրառվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից՝ ընդհանուր գործընթացի շրջանակներում

ընթացակարգերի եւ գործառնությունների կատարման կարգը հսկելու ժամանակ, ինչպես նաեւ ընդհանուր գործընթացի իրագործումն ապահովող տեղեկատվական համակարգերի բաղադրիչների նախագծման, մշակման եւ լրամշակման ժամանակ:

### III. Հիմնական հասկացությունները

4. Սույն կանոնների նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ նշանակությունը.

«ավտորիզացում»՝ ընդհանուր գործընթացի որոշակի մասնակցին որոշակի գործողությունների կատարման իրավունքների վերապահում.

«անցման կետ»՝ Միության անդամ պետության օրենսդրության պահանջներին համապատասխան սարքավորված՝ այդ պետության պետական սահմանով անցման կետ, որտեղ իրականացվում է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն.

«ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի վիճակ»՝ հատկություն, որն ընդհանուր գործընթացի ընթացակարգի կատարման որոշակի փուլում բնութագրում է տեղեկատվական օբյեկտը եւ որը փոփոխվում է ընդհանուր գործընթացի գործառնությունները կատարելիս.

«անհամապատասխանության մասին ծանուցում»՝ բացակայող փաստաթղթերը եւ հսկման ենթակա պարամետրերի անհամապատասխանության վերացման հաստատումը ներկայացնելու անհրաժեշտության մասին ծանուցում:

Սույն կանոններում գործածվող «տրանսպորտային միջոցի քաշային եւ եզրաչափային պարամետրեր», «Միության արտաքին սահման», «հսկիչ կետ», «տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններ», «փոխադրող», «տրանսպորտային միջոց» եւ «տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն» հասկացությունները կիրառվում են «Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության մասին» («Եվրասիական տնտեսական

միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին կից թիվ 24 հավելված) (այսուհետ՝ Կարգ) արձանագրությանը կից թիվ 1 հավելվածով սահմանված իմաստներով:

Սույն կանոններում գործածվող «ընդհանուր գործընթացի ընթացակարգերի խումբ», «ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտ», «կատարող», «ընդհանուր գործընթացի գործառնություն», «ընդհանուր գործընթացի ընթացակարգ» եւ «ընդհանուր գործընթացի մասնակից» հասկացությունները կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 63 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդաբանությամբ սահմանված իմաստներով:

#### IV. Հիմնական տեղեկություններ ընդհանուր գործընթացի վերաբերյալ

5. Ընդհանուր գործընթացի ամբողջական անվանումը՝ «Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության տեղեկատվական ապահովում»:

6. Ընդհանուր գործընթացի ծածկագրային նշագիրը՝ P.RS.01, 1.0.0 տարբերակ:

##### 1. Ընդհանուր գործընթացի նպատակները եւ խնդիրները

7. Ընդհանուր գործընթացի նպատակներն են՝ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունավետության բարձրացումը եւ արտաքին ու փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի շրջանակներում Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցության մեխանիզմների ստեղծումը:

8. Ընդհանուր գործընթացի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծում տալ հետևյալ խնդիրներին.

ա) ապահովել անդամ պետությունների տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների՝ անդամ պետությունների տարածքով բեռների (ուղեւորների) փոխադրման պայմանների եւ այդպիսի փոխադրմանը ներկայացվող սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության օպերատիվ հասանելիությունը,

բ) ապահովել անդամ պետությունների տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների՝ Միության արտաքին սահմանին եւ անդամ պետությունների տարածքով տրանսպորտային միջոցների տեղափոխման ժամանակ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների օպերատիվ հասանելիությունը՝ ներառյալ տուրքերի եւ տուգանքների վճարման ու խախտումների վերացման վերաբերյալ տեղեկատվությունը՝ անհամապատասխանության մասին ավելի վաղ տրված ծանուցումների համաձայն,

գ) ապահովել ազգային մակարդակով միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ իրականացնելու համար տրամադրված եւ օգտագործված թույլտվությունների մասին, այդ թվում՝ անդամ պետությունների տարածքով մեծ եզրաչափերով, ծանրաքաշ, վտանգավոր բեռների փոխադրման համար հատուկ թույլտվությունների մասին համախմբված տեղեկատվության հաշվառումը եւ պահպանումը, ինչպես նաեւ նշված տեղեկությունների հասանելիությունը մյուս անդամ պետությունների համար,

դ) կատարելագործել ընդհանուր գործընթացի մասնակիցների միջեւ տեղեկատվական փոխգործակցության մեխանիզմը,

ե) հսկողության տարբեր տեսակները (տրանսպորտային (ավտոմոբիլային), սահմանային, մաքսային, անասնաբուժական, բուսասանիտարական եւ սանիտարահամաճարակաբանական) անցկացնելու նպատակներով ապահովել «մեկ պատուհան» մեխանիզմի կիրառման հնարավորությունը,



զ) ապահովել միջազգային փոխադրումների եւ անդամ պետությունների տարածքում տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման պայմանների մասին, տուրքերի, տուգանքների եւ այդպիսի պայմանների խախտման համար պատասխանատվության միջոցների մասին տեղեկությունները փոխադրողին տրամադրելը:

2. Ընդհանուր գործընթացի մասնակիցները

9. Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկը բերված է 1-ին աղյուսակում

Աղյուսակ 1

Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.ACT.001	Եվրասիական տնտեսական հանձնաժողով	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն կառուցվածքային ստորաբաժանումը, որը պատասխանատու է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները փոխադրողին՝ նրա հարցմամբ տրամադրելու համար
P.RS.01.ACT.001	փոխադրող	սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով՝ փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոց օգտագործող, տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ տրամադրող եւ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հարցում կատարող իրավաբանական կամ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
		Ֆիզիկական անձ կամ այդպիսի անձի ներկայացուցիչ
P.RS.01.ACT.002	տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին	մյուս անդամ պետությունների տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններից տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ կամ փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին
P.RS.01.ACT.003	տեղեկություններ տրամադրող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին	տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին, որն իրականացնում է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ համախմբված տեղեկությունների հաշվառում, պահպանում է տրամադրում, այդ թվում՝ մյուս անդամ պետությունների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների կատարած հարցումներով
P.RS.01.ACT.004	Միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին	անդամ պետության գործադիր իշխանության մարմին, որը լիազորված է իրականացնելու տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն Միության արտաքին սահմանին եւ որն օգտագործում է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների ու փոխադրողի թույլատրագրերի վերաբերյալ տեղեկություններ ազգային տեղեկատվական ռեսուրսից, այդ թվում՝ տեղեկություններ մյուս անդամ պետությունների ազգային տեղեկատվական ռեսուրսներից
P.RS.01.ACT.005	տեղեկություններ ստացող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին	ազգային տեղեկատվական ռեսուրսում տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ համախմբված տեղեկություններ ստացող եւ գրանցող

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
		տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին
P.RS.01.ACT.006	անդամ պետության տարածքի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին	անդամ պետության տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կառուցվածքում տարածքային մարմին, որը լիազորված է իրականացնելու անդամ պետության տարածքում տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն եւ որն օգտագործում է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների եւ փոխադրողի թույլատրագրերի վերաբերյալ տեղեկություններ ազգային տեղեկատվական ռեսուրսից, այդ թվում՝ տեղեկություններ մյուս անդամ պետությունների ազգային տեղեկատվական ռեսուրսներից

### 3. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

10. Ընդհանուր գործընթացն ըստ իրենց նպատակային նշանակության՝ խմբավորված ընթացակարգերի ամբողջություն է՝

ա) տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության ընթացակարգեր.

բ) տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հաշվառման, պահպանման եւ օգտագործման ընթացակարգեր.

գ) փոխադրողին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու ընթացակարգեր:

11. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը կատարելիս տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններն ապահովում են ազգային տեղեկատվական ռեսուրսների վարում այն ազգային տեղեկատվական


համակարգերի շրջանակներում, որոնք պարունակում են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման արդյունքների հիման վրա ստացված տեղեկություններ, այդ թվում՝ Միության արտաքին սահմանին:

Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության ընթացակարգերի խմբի կազմի մեջ մտնում են տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելու եւ այդտեղից մեկնելու ժամանակ կատարվող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության, ինչպես նաեւ անդամ պետության տարածքում կատարվող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության ընթացակարգերը:

Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հաշվառման, պահպանման եւ օգտագործման ընթացակարգերի խմբի կազմի մեջ մտնում է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ համախմբված տեղեկությունների հաշվառման, պահպանման եւ փոխանցման ընթացակարգը:

Փոխադրողին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու ընթացակարգերի խմբի կազմի մեջ մտնում են Միության տեղեկատվական հարթակի օգտագործմամբ փոխադրողին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու ընթացակարգը եւ տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից փոխադրողին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու ընթացակարգը:

12. Ընդհանուր գործընթացի կառուցվածքի՝ բերված նկարագրությունը ներկայացված է 1-ին նկարում:



Նկ. 1. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

13. Ընդհանուր գործընթացի՝ ըստ իրենց նպատակային նշանակության խմբավորված ընթացակարգերի կատարման կարգը՝ ներառյալ գործառնությունների մանրակրկիտ նկարագրությունը, բերված է սույն կանոնների VIII բաժնում:

14. Ընթացակարգերի յուրաքանչյուր խմբի համար բերվում է ընդհանուր գործընթացի ընթացակարգերի միջև առկա կապերը եւ դրանց կատարման կարգն արտացոլող ընդհանուր սխեմա: Ընթացակարգերի ընդհանուր սխեման կառուցված է UML (մոդելավորման միասնականացված լեզու՝ Unified Modeling Language) գրաֆիկական նոտացիայի օգտագործմամբ եւ ապահովված է տեքստային նկարագրությամբ:

4. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության  
իրականացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության  
ընթացակարգերի խումբը

15. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության ընթացակարգերի կատարումն սկսվում է փոխադրողի կողմից Միության արտաքին սահմանի անցման կետ կամ անդամ պետության տարածքի հսկիչ կետ ժամանելու պահից:

Միության մաքսային տարածք մուտք գործելու նպատակով փոխադրողի կողմից Միության արտաքին սահմանի անցման կետ ժամանելու ժամանակ կատարվում է «Միության մաքսային տարածք մուտք գործելիս տրանսպորտային միջոցի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացում» ընթացակարգը (P.RS.01.PRC.001), որի կատարման արդյունքներով Միության արտաքին սահմանի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից ձեւակերպվում են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքները, տրվում փոխադրողին եւ գրանցվում ազգային տեղեկատվական ռեսուրսում: Տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից ուղարկվում են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու հարցումներ եւ փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկություններ տրամադրելու հարցումներ այն անդամ պետության տեղեկություններ տրամադրող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններ, որոնց տարածքով իրականացվում է փոխադրում՝ այն դեպքում, երբ փոխադրումն իրականացվում է թույլտվությունների (հատուկ թույլտվությունների) հիման վրա եւ պահանջվում է թույլատրագրերի վավերականության հաստատում:

Փոխադրողի կողմից Միության մաքսային տարածքի հսկիչ կետ ժամանելիս կատարվում է «Անդամ պետության տարածքում տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացում» ընթացակարգը (P.RS.01.PRC.002), որի կատարման արդյունքներով անդամ պետության տարածքի տրանսպորտային


(ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքները, այդ թվում՝ անհամապատասխանության (առկայության դեպքում) վերացումը ստուգելու արդյունքները, ձեւակերպվում են, տրվում փոխադրողին եւ գրանցվում ազգային տեղեկատվական ռեսուրսում, իսկ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման արդյունքներով ընդունվում է որոշում՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան: Տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից ուղարկվում են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու հարցումներ այն անդամ պետությունների տեղեկություններ տրամադրող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններ, որոնց տարածքով իրականացվում է փոխադրումը:

Միության մաքսային տարածքից մեկնելու նպատակով փոխադրողի կողմից Միության արտաքին սահմանի անցման կետ ժամանելիս կատարվում է «Միության մաքսային տարածքից մեկնելու ժամանակ տրանսպորտային միջոցի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացում» ընթացակարգը (P.RS.01.PRC.003), որի կատարման արդյունքներով Միության արտաքին սահմանի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքները ձեւակերպվում եւ գրանցվում են ազգային տեղեկատվական ռեսուրսում: Տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից ուղարկվում են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու հարցումներ եւ փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկություններ տրամադրելու հարցումներ այն անդամ պետությունների տեղեկություններ տրամադրող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններ, որոնց տարածքով իրականացվում է փոխադրում՝ այն դեպքում, երբ փոխադրումն իրականացվում է թույլտվությունների (հատուկ թույլտվությունների) հիման վրա եւ պահանջվում է թույլատրագրերի վավերականության հաստատում:

Նշված տեղեկությունների տրամադրումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հուլիսի 5-ի թիվ 80 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության տեղեկատվական ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին (այսուհետ՝ Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգ) համապատասխան: Նշված տեղեկությունների ձեռնարկը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հուլիսի 5-ի թիվ 80 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության տեղեկատվական ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռնարկերի ու կառուցվածքների նկարագրությանը (այսուհետ՝ Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռնարկերի ու կառուցվածքների նկարագրություն):

16. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 2-րդ նկարում:





Նկ. 2. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեմա

17. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.RS.01.PRC.001	տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս տրանսպորտային	ընթացակարգը նախատեսված է տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնելու համար՝ փոխադրողի կողմից մինչև անցման կետ ժամանելը տրամադրված

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
	(ավտոմոբիլային) հսկողության իրականացում	նախնական տեղեկությունների հիման վրա եւ ավելի վաղ անցկացված տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների մասին ու այն անդամ պետությունների տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններից հարցմամբ ստացվող ուղեւորության թույլտվությունների (հատուկ թույլտվությունների) վավերականության մասին արդիական տեղեկությունների հիման վրա, որոնց տարածքով ծրագրվում է իրականացնել կամ իրականացվել է փոխադրում
P.RS.01.PRC.002	անդամ պետության տարածքում տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացում	ընթացակարգը նախատեսված է անդամ պետությունների տարածքում տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնելու համար, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի՝ հսկման ենթակա պարամետրերի եւ (կամ) փոխադրողի փաստաթղթերի անհամապատասխանությունը վերացնելու նպատակներով՝ օգտագործելով մյուս անդամ պետությունների տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների կողմից ավելի վաղ անցկացված տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ արդիական տեղեկությունները
P.RS.01.PRC.003	տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածքից մեկնելիս տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացում	ընթացակարգը նախատեսված է տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածքից մեկնելիս տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնելու համար՝ օգտագործելով նշանակված եւ վճարված տուգանքների վերաբերյալ, հավելագրված եւ վճարված ճանապարհային վճարների վերաբերյալ, ավելի վաղ անցկացված տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ արդիական տեղեկությունները՝ հարցմամբ ստացված այն անդամ պետությունների տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններից, որոնց տարածքով իրականացվել է փոխադրումը


5. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հաշվառման, պահպանման եւ օգտագործման ընթացակարգերի խումբը

18. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հաշվառման, պահպանման եւ օգտագործման ընթացակարգերի կատարումն իրականացվում է սահմանված պարբերականությամբ:

Տեղեկություններ տրամադրող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից «Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ համախմբված տեղեկությունների հաշվառում, պահպանում եւ փոխանցում» ընթացակարգի (P.RS.01.PRC.004) կատարման արդյունքներով տեղեկություններ ստացող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններին տրամադրվում են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ համախմբված տեղեկություններ:

Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ համախմբված տեղեկությունների տրամադրումն իրականացվում է Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան: Նշված տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը:

19. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հաշվառման, պահպանման եւ օգտագործման ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 3-րդ նկարում:



Նկ. 3. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հաշվառման, պահպանման եւ օգտագործման ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեմա

20. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հաշվառման, պահպանման եւ օգտագործման ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հաշվառման, պահպանման եւ օգտագործման ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.RS.01.PRC.004	տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ համախմբված տեղեկությունների հաշվառում, պահպանում եւ փոխանցում	ընթացակարգը նախատեսված է՝ տեղեկություններ տրամադրող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից տեղեկություններ ստացող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ, այդ թվում՝ Միության մաքսային տարածքով միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ իրականացնելու համար օգտագործված թույլտվությունների վերաբերյալ համախմբված տեղեկություններ տրամադրելու համար

6. Փոխադրողին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու ընթացակարգերի խումբը

21. Փոխադրողին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու ընթացակարգերի կատարումն սկսվում է փոխադրողի կողմից տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու հարցումն ուղարկելու պահից:

Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու հարցումը՝ Միության տեղեկատվական հարթակում փոխադրողից անձնական գրասենյակի միջոցով ստանալու ժամանակ կատարվում է «Միության տեղեկատվական հարթակի օգտագործմամբ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ փոխադրողին տեղեկությունների տրամադրում» ընթացակարգը (P.RS.01.PRC.005), որի կատարման արդյունքներով Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հարցմամբ տեղեկություններ է պահանջում տեղեկություններ տրամադրող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններից տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ, այդ թվում՝ անհամապատասխանության մասին ծանուցումների, տուգանքների եւ տուրքերի վերաբերյալ, եւ ստացված տեղեկությունները տրամադրում է փոխադրողին:


Նշված տեղեկությունների տրամադրումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հուլիսի 5-ի թիվ 80 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության տեղեկատվական ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության

մարմինների միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին (այսուհետ՝ Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների եւ Հանձնաժողովի միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգ) համապատասխան: Նշված տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը:

Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու հարցումը՝ անձնական գրասենյակի միջոցով՝ ազգային տեղեկատվական համակարգի շրջանակներում, փոխադրողից ստանալու ժամանակ կատարվում է «Տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից փոխադրողին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրում» ընթացակարգը (P.RS.01.PRC.006), որի կատարման արդյունքներով փոխադրողը ստանում է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները՝ ներառյալ ծանուցումների, տուգանքների եւ տուրքերի վերաբերյալ տեղեկությունները, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ: Տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից ուղարկվում է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու հարցում այն անդամ պետությունների տեղեկություններ տրամադրող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններ, որոնց տարածքով իրականացվում է փոխադրումը:

Նշված տեղեկությունների տրամադրումն իրականացվում է Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան: Նշված տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը:

22. Փոխադրողին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 4-րդ նկարում:



Նկ. 4. Փոխադրողին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեմա

23. Փոխադրողին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 4-րդ աղյուսակում:

Փոխադրողին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.RS.01.PRC.005	Միության տեղեկատվական հարթակի օգտագործմամբ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ փոխադրողին տեղեկություններ տրամադրելը	ընթացակարգը նախատեսված է Միության տեղեկատվական հարթակում գետեղված ծառայությունների օգտագործմամբ փոխադրողի կողմից հարցմամբ պահանջված տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ (ներառյալ Միության մաքսային տարածքում հավելագրված եւ վճարված տուգանքների ու տուրքերի գումարների, անհամապատասխանության մասին ծանուցումների վերաբերյալ տեղեկությունները) ստանալու համար
P.RS.01.PRC.006	տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից փոխադրողին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելը	ընթացակարգը նախատեսված է անդամ պետությունների ազգային տեղեկատվական համակարգերով տրամադրվող ծառայությունների օգտագործմամբ փոխադրողի կողմից հարցմամբ պահանջված տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ (այդ թվում՝ Միության մաքսային տարածքում հավելագրված եւ վճարված տուգանքների ու տուրքերի գումարների, ինչպես նաեւ անհամապատասխանության մասին ծանուցումների վերաբերյալ տեղեկությունները) տեղեկություններ ստանալու համար



V. Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտները

24. Տեղեկատվական այն օբյեկտների ցանկը, որոնց վերաբերյալ կամ որոնցից տեղեկությունները տեղեկատվական փոխգործակցության ընթացքում փոխանցվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների միջև, բերված է 5-րդ աղյուսակում:

Աղյուսակ 5

Տեղեկատվական օբյեկտների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.RS.01.BEN.001	տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ	Միության մաքսային տարածքում փոխադրողի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ՝ ներառյալ անհամապատասխանության մասին ծանուցման վերաբերյալ եւ տուրքերի ու տուգանքների վճարման վերաբերյալ տեղեկությունները
P.RS.01.BEN.002	փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկություններ	Փոխադրողի՝ փոխադրումներ իրականացնելու թույլատրագրերի մասին տեղեկություններ՝ ներառյալ թույլտվությունների (հատուկ թույլտվությունների) մասին տեղեկությունները

VI. Ընդհանուր գործընթացի մասնակիցների պատասխանատվությունը

25. Հանձնաժողովի՝ տեղեկատվական փոխգործակցությանը մասնակցող պաշտոնյաները եւ աշխատակիցները՝ տեղեկությունների ժամանակին ու ամբողջական փոխանցումն ապահովելուն ուղղված պահանջները չկատարելու համար կարգապահական պատասխանատվության են ենթարկվում «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին, Միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերին եւ ակտերին համապատասխան, իսկ տրանսպորտային

(ավտոմոբիլային) հսկողության մարմինների պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

VII. Ընդհանուր գործընթացի տեղեկատուներ եւ դասակարգիչներ

26. Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը բերված է 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 6

Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը
1	2	3	4
P.CLS.001	աշխարհի երկրների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է երկրների անվանումները եւ դրանց համապատասխանող ծածկագրերը (կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմանը համապատասխան)
P.CLS.002	արժույթների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է արժույթների ծածկագրերի եւ անվանումների ցանկը (կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմանը համապատասխան)
P.CLS.003	Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ)	դասակարգիչ	պարունակում է ապրանքների ծածկագրերի եւ անվանումների ցանկը, որը հիմնված է Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ ապրանքների նկարագրման ու ծածկագրման ներդաշնակեցված համակարգի եւ Անկախ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը
1	2	3	4
			պետությունների համագործակցության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի վրա
P.CLS.023	չափման միավորների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է չափման միավորների ծածկագրերի, պայմանական նշագրերի եւ անվանումների ցանկը (կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմանը համապատասխան)
P.CLS.026	Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատու	տեղեկատու	պարունակում է անդամ պետությունների լիազորված մարմինների ցանկը
P.CLS.067	երթուղու կետերի տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է երթուղու կետերի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.RS.01.CLS.001	ուղեւորությունների տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է այն ուղեւորությունների տեսակների եւ անվանումների ծածկագրերը, որոնք սահմանվում են դրանց ուղղություններով
P.RS.01.CLS.002	տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն համար օգտագործվող թույլատրագրերի տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	միջազգային հաղորդակցության մեջ բեռների եւ ուղեւորների փոխադրումներ իրականացնելու իրավունքի թույլտվությունների տեսակների ցանկ
P.RS.01.CLS.003	այն խախտումների տեսակների դասակարգիչ, որոնք հայտնաբերվել են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության	դասակարգիչ	պարունակում է միջազգային ավտոմոբիլային փոխադրումների իրականացմանը ներկայացվող պահանջների խախտումների տեսակների

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը
1	2	3	4
	արդյունքների հիման վրա		ցանկը
P.RS.01.CLS.005	այն հսկիչ կետերի ցանկը, որոնք գտնվում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքում, եւ որտեղ կարող է իրականացվել տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն	տեղեկատու	պարունակում է այն հսկիչ կետերի անվանումները, գտնվելու վայրը եւ հետադարձ կապի տվյալները, որոնք գտնվում են անդամ պետությունների տարածքում, եւ որտեղ կարող է իրականացվել տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն
P.RS.01.CLS.006	փոխադրումների տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է բեռների եւ ուղեւորների փոխադրման տեսակների ծածկագրերը եւ անվանումները
P.RS.01.CLS.007	ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների տիպերի դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է տրանսպորտային միջոցների տիպերի ծածկագրերը եւ անվանումները՝ կախված դրանց նպատակային նշանակությունից
P.RS.01.CLS.008	երրորդ երկրների հետ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին միջազգային պայմանագրերի ժողովածու	տեղեկատու	պարունակում է երրորդ երկրների հետ անդամ պետությունների՝ միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին միջազգային պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվություն
P.RS.01.CLS.009	այնպիսի որոշումների տեղեկատու, որոնք ընդունվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների հիման վրա	տեղեկատու	պարունակում է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման արդյունքներով տրանսպորտային միջոցների բացթողման կամ բացթողման արգելքի (արգելապահման) մասին ընդունված որոշումների ծածկագրերը եւ նշագրերը

## VIII. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը

1. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության ընթացակարգերը

«Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացում»

ընթացակարգ (P.RS.01.PRC.001)

27. «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացում» ընթացակարգի (P.RS.01.PRC.001) կատարման սխեման ներկայացված է 5-րդ նկարում:



29. Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելու կամ Միության մաքսային տարածքից դրա մեկնելու ժամանակ ավելի վաղ անցկացված տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ (այսուհետ՝ ավելի վաղ անցկացված տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ) ստանալու անհրաժեշտության դեպքում կատարվում է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու հարցում» գործառնությունը (P.RS.01.OPR.001), որի կատարման արդյունքներով Միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից ձեւավորվում է տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին է ուղարկվում տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու հարցումը:

30. Տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու հարցումը ստանալիս կատարվում է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու հարցման ստացում» գործառնությունը (P.RS.01.OPR.002):

31. «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու հարցման ստացում» գործառնությունը (P.RS.01.OPR.002) կատարելու դեպքում կատարվում է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ

տեղեկություններ ներկայացնելու հարցում» գործառնությունը (P.RS.01.OPR.003), որի կատարման արդյունքներով տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից ձեւավորվում է մյուս անդամ պետությունների՝ տեղեկություններ ներկայացնող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններ է ուղարկվում տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու հարցումը:

32. Տեղեկություններ ներկայացնող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու հարցումը ստանալիս կատարվում է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.RS.01.OPR.004), որի կատարման արդյունքներով տեղեկություններ ներկայացնող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին են ուղարկվում տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը:

33. Տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ ստանալիս կատարվում է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների ընդունում էւ մշակում» գործառնությունը (P.RS.01.OPR.005), որի կատարման արդյունքներով տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից ընդունվում են փոխադրողի տրանսպորտային



(ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը:

34. «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունն (P.RS.01.OPR.005) ավարտելիս կատարվում է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս Միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.RS.01.OPR.006), որի կատարման արդյունքներով տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից Միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին են ուղարկվում տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը:

35. Միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից անհամապատասխանությունների առկայության վերաբերյալ տեղեկատվություն պարունակող՝ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու դեպքում կատարվում է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս անհամապատասխանությունների վերացման ստուգում» գործառնությունը (P.RS.01.OPR.007), որի կատարման արդյունքներով Միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից ստուգվում է խախտումների վերացումը՝ ավելի վաղ տրված՝ անհամապատասխանությունների մասին ծանուցումների համաձայն:

36. Եթե ավելի վաղ անցկացված տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների ստացում չի պահանջվում, կամ Միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինը ստացել է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ, որոնք չեն պարունակում անհամապատասխանությունների առկայության վերաբերյալ տեղեկատվություն, կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցում, կամ կատարվել է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս անհամապատասխանությունների վերացման ստուգում» գործառնությունը (P.RS.01.OPR.007), ապա կատարվում է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային սահման մուտք գործելիս փոխադրման մասին տեղեկատվության հաշվառում» գործառնությունը (P.RS.01.OPR.008), որի կատարման արդյունքներով Միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից փոխադրման վերաբերյալ տեղեկությունները հաշվառվում են ազգային տեղեկատվական ռեսուրսում, այդ թվում՝ փոխադրողի կողմից մինչև անցման կետ ժամանելը ներկայացված նախնական տեղեկատվության հիման վրա:

37. Թույլտվությամբ (հատուկ թույլտվությամբ) ուղեւորություն իրականացնելիս փոխադրողի թույլատրագրերի վավերականությունը հաստատելու անհրաժեշտության դեպքում «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս փոխադրման մասին տեղեկատվության հաշվառում» գործառնությունն (P.RS.01.OPR.008) ավարտելու պահից կատարվում է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկություններ ներկայացնելու հարցում» գործառնությունը (P.RS.01.OPR.009), որի կատարման արդյունքներով Միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից ձեւավորվում

Եւ փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկություններ ներկայացնելու հարցում է ուղարկվում՝ տեղեկությունների հարցում կատարող այն անդամ պետության տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին, որի տարածքով իրականացվում է փոխադրումը:

38. Տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկություններ ներկայացնելու հարցումը ստանալու դեպքում կատարվում է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկություններ ներկայացնելու հարցման ստացում» գործառնությունը (P.RS.01.OPR.010):

39. «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկություններ ներկայացնելու հարցման ստացում» գործառնությունը (P.RS.01.OPR.010) կատարելու դեպքում կատարվում է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկություններ ներկայացնելու հարցում» գործառնությունը (P.RS.01.OPR.011), որի կատարման արդյունքներով տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից ձեւավորվում է փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկություններ ներկայացնելու հարցում է ուղարկվում այն անդամ պետությունների տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններ, որոնց տարածքներով իրականացվում է փոխադրումը:

40. Տեղեկություններ ներկայացնող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկություններ ներկայացնելու հարցումը ստանալու դեպքում կատարվում է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկությունների ներկայացում» գործառնությունը

(P.RS.01.OPR.012), որի կատարման արդյունքներով ձեւավորվում եւ տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին են ուղարկվում փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը:

41. Տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկություններ կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցում ստանալիս կատարվում է «Տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք մուտք գործելիս փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.RS.01.OPR.013), որի կատարման արդյունքներով տեղեկությունների հարցում կատարող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից ընդունվում են փոխադրողի թույլատրագրերի մասին տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը:

